ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐ

Միջավայրի պայմանների և մարդու առողջության վրա բացասաբար ազդող ֆիզիկական, քիմիական և կենսաբանական աղտոտիչների թափանցումը, առաջացումն ու կուտակումը բնական ջրերում կոչվում է ջրի աղտոտում: Ջրի աղտոտման աղբյուրները հետևյալն են.

- կենցաղային հոսքաջրերը,
- արդյունաբերական հոսքաջրերը,
- ձնհալի և անձրևների ժամանակ հողահանդակներից տեղափոխված պեստիցիդները,
- բնակավայրերից վնասակար նյութերը,
- անձրևի և ձյան միջոցով՝ մթնոլորտից անջատվող աղտոտող նյութերը:

Աղտոտման աղբյուրները կարող են լինել ինչպես կետային, այնպես էլ ցրված: Կենցաղային հոսքաջրերը հիմնականում աղտոտված են լինում կենսածին նյութերով, արդյունաբերական հոսքաջրերը՝ առավել հաճախ նավթամթերքներով, ֆենոլներով, ծանր մետաղներով (կապար, կադմիում, պղինձ, ցինկ և այլն) և բարդ օրգանական միացություններով (սինթետիկ լվացամիջոցներ, ներկեր, ճարպեր), որոնք վատթարացնում են ջրի որակը, խմելու և սննդի մեջ օգտագործելու համար դարձնում ոչ պիտանի, խախտվում են ջրային ավազանի կենսաբանական շարժընթացները, նվազում է աղտոտող նյութերից ջրի ինքնամաքրման հատկությունը, փոխվում է ջրային կենսաբազմազանության կազմն ու սննդային արժեքը: Կենցաղային հոսքաջրերը հիմնականում պարունակում են աղիքային վարակիչ հիվանդությունների հարուցիչներ:

Մակերևութային ջրեր

2022 թվականի 2-րդ եռամսյակում մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի դիտարկումներ իրականացվել են 91 հիդրոլոգիական դիտակետում, այդ թվում՝ 82 գետային, 5 ջրամբարային (Արփի լիճ, Ախուրյան, Մարմարիկ, Ապարան, Ազատ) և 4 լճային (Սևանա լճում): Դիտակետերում իրականացվում են ամենօրյա դիտարկումներ մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի վերաբերյալ (ջրի մակարդակ, ջրի և օդի ջերմաստիճան, սառցային երևույթներ, ջրի ելքի չափումներ): 57 օպերատիվ դիտակետերից ամենօրյա ռեժիմով տվյալներ են ստացվել մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի վերաբերյալ, այդ տվյալների հիման վրա կազմվել են հիդրոլոգիական տեղեկագրեր և տրամադրվել պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններին և այլ շահառուների:

2022 թվականի 2-րդ եռամսյակում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է հանրապետության 51 գետի, Արփի լճի, Ախուրյանի, Ապարանի, Երևանյան լիճ, Ազատի և Կեչուտի ջրամբարների, Արփա-Սևան և Որոտան-Արփա ջրատարների և Սևանա լճի 14 դիտակետում: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական մինչև 45 ինդիկատորային ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ): Ջրի որակի գնահատումը կատարվել է համաձայն ՀՀ կառավարության 2011թ. հոկտեմբերի 27-ի N75-Ն որոշման: Մակերևութային ջրերի որոշ փորձանմուշներում որոշվել են նաև օրգանական միացությունների պարունակությունները:

Իրականացված դիտարկումների արդյունքները ներկայացված են Աղյուսակ 9-18-ում և Հավելված 1-ում:

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Հիդրոլոգիական դիտարկումներ

Հյուսիսային ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 21 դիտակետում: Որոշ օպերատիվ հիդրոլոգիական դիտակետերի ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաներերի նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9. Հյուսիսային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր, մ³/վ								
		ապրիլ			մայիս			հունիս		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Փամբակ	Վանաձոր	*10.2*	13.7	74	*10.2*	15.5	66	*4.68*	9.05	52
Դեբեդ	Այրում	*92.5*	69.9	132	*84.4*	82.7	102	*49.1*	60.7	81
Ձորագետ	Գարգառ	*37.4*	28.4	132	*33.7*	36.7	92	*24.1*	28.2	86
Աղստև	Իջևան	*23.3*	26.6	88	*25.1*	27.9	90	*11.2*	16.5	68
Գետիկ	Գոշ	*7.30*	10.8	67	*8.57*	10.6	81	*3.28*	5.47	60

Մակերևութային ջրերի որակ

Հյուսիսային ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 22 դիտակետում:

Փամբակ գետի ջրի որակը Խնկոյան գյուղից վերև ապրիլին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝ «լավ» (2-րդ դաս): Սպիտակ քաղաքից ներքև ապրիլին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մայիսին՝ «միջակ» (3-րդ դաս): Վանաձոր քաղաքից վերև ապրիլին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մայիս և հունիս ամիսներին՝ «միջակ» (3-րդ դաս), Վանաձոր քաղաքից ներքև ապրիլ և հունիս ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Դեբեդ գետի ջրի որակը Մարց գետի թափման կետից ներքև հատվածում ապրիլին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մայիսին՝ «միջակ» (3-րդ դաս): Այրում քաղաքից վերև հատվածում ջրի որակը մայիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Սահմանի մոտ հատվածում ապրիլ և մայիս ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝ «վատ» (5-րդ դաս):

Ձորագետ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում ապրիլին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), հունիսին՝ «լավ» (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում ապրիլին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝ «լավ» (2-րդ դաս):

Մարց գետի ջրի որակը գետաբերանի հատվածում ապրիլին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիսին՝ «լավ» (2-րդ դաս):

Ախթալա գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Գարգառ գետի ջրի որակը ակունքում ապրիլին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «լավ» (2-րդ դաս), գետաբերանում ապրիլին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս):

Շնող գետի ջրի որակը գետաբերանի հատվածում ապրիլին և հունիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Աղստև գետի ջրի որակը Դիլիջան քաղաքից վերև և ներքև հատվածներում մայիսին գնահավել է «միջակ» (3-րդ դաս): Իջևան քաղաքից վերև և ներքև հատվածներում մայիսին ջրի որկաը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Գետիկ գետի ջրի որակը Վահան գյուղից վերև հատվածում մայիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս):



Գծապատկեր 48. Փամբակ գետում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 49. Փամբակ գետում մոլիբդենի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 50. Դեբեդ գետում մոլիբդենի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 51. Ախթալա գետում պղնձի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 52. Ախթալա գետում մոլիբդենի կոնցենտրացիաների փոփոխությունները

ՀՀ Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակ





ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոններ
- Քաղաքներ
- Բնակավայրեր

Մակերևութային ջրերի

- Որակի մոնիթորինգի դիտակետեր
- Հիդրոլոգիական դիտակետեր
- Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասը

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս





Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք

Հիդրոլոգիական դիտարկումներ

Ախուրյանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում, այդ թվում՝ 14 գետային և 2 ջրամբարային: Օպերատիվ դիտակետերից երկուսի ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաներերի նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10. Ախուրյանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր, մ³/վ								
		ապրիլ			մայիս			հունիս		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Ախուրյան	Ախուրիկ	11.8	15.7	75	6.55	11.5	57	3.19	6.41	50
Մեծամոր	Մեծամոր	5.47	29.5	19	2.31	20.5	11	2.27	15.2	15

Ախուրյանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 11 դիտակետում:

Ախուրյան գետի ջրի որակը Ամասիա գյուղից ներքև հատվածում ապրիլին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Գյումրի քաղաքից վերև հատվածում ջրի որակը ապրիլին գնահավել է «վատ» (5-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» (4-րդ դաս), Գյումրիից ներքև հատվածում ապրիլ և հունիս ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Բագարան գյուղից ներքև հատվածում հունիսին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Աշոցք գետի ջրի որակը Մուսայելյան գըուղից վերև հատվածում հունիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «անբավարար» (4-րդ դաս):

Կարկաչուն գետի ջրի որակը ապրիլին և հունիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ ապրիլին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս), Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք ապրիլին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս), Ռանչպար գյուղից ներքև հատվածում ապրիլին և մայիսին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):



Գծապատկեր 54. Մեծամոր գետում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները

ՀՀ Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը







ՊԱՅՄԱՆԱԳԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոններ
- Քաղաքներ
- Բնակավայրեր

Մակերևութային ջրերի

- Որակի մոնիթորինգի դիտակետեր
- Հիդրոլոգիական դիտակետեր
- Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Ախուրյան ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս



Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Հիդրոլոգիական դիտարկումներ

Հրազդանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում, այդ թվում՝ 13 գետային, 2 ջրամբարային և մեկ ջրանցքի: Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 11-ում:

Աղյուսակ 11. Հրազդանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր, մ³/վ								
		ապրիլ			մայիս			հունիս		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Հրազդան	Հրազդան	15.3	20.1	76	22.3	28.0	79	11.6	11.9	97
Հրազդան	Արգել	4.87	8.03	61	5.19	7.79	67	4.07	4.43	92
Հրազդան	Երևան	9.38	18.2	52	2.69	11.8	23	3.12	3.65	86
Մարմարիկ	Հանքավան	3.47	4.00	87	7.08	7.66	92	1.53	3.37	45
Մարմարիկ	Ադավնաձոր	11.1	12.1	92	19.4	19.9	97	10.6	9.46	112
Քասախ	Վարդենիս	2.32	3.88	60	1.49	3.37	44	0.54	1.76	31
Քասախ	Աշտարակ	6.17	7.16	86	4.88	3.69	132	5.10	3.39	151

Հրազդանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 20 դիտակետում:

Քասախ գետի ջրի որակը Ապարան քաղաքից վերև հատվածում մայիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս), Ապարան քաղաքից ներքև հատվածում մայիսին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝ «վատ» (5-րդ դաս): Աշտարակ քաղաքից վերև հատվածում ջրի որակը մայիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս), Աշտարակ քաղաքից ներքև հատվածում ջրի որակը մայիսին և հունիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Գետաբերանի հատվածում ջրի որակը ապրիլին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մայիսին և հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս):

Գեղարոտ գետի ջրի որակը Արագած գյուղից վերև հատվածում մայիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Գետաբերանի հատվածում ջրի որակը մայիսին և հունիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Շաղվարդ գետի ջրի որակը Փարմպի գյուղից ներքև հատվածում մայիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս):

Հրազդան գետի ջրի որակը Քաղսի գյուղից ներքև հատվածում ապրիլին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս): Արգել գյուղից ներքև ջրի որակը ապրիլին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս): Արզնի ՀԷԿ-ից վերև հատվածում ջրի որակը ապրիլին և հունիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը ապրիլին և մայիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Գետառ գետի ջրի որակը գատաբերանում մայիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մարմարիկ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում ապրիլին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Ծաղկաձոր (Տանձաղբյուր) գետի ջրի որակը Ծազկաձոր քաղաքից վերև հատվածում ապրիլին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)։ Ծազկաձոր քաղաքից ներքև հատվածում ջրի որակը ապրիլին գնահատվել է «վատ» (5-րդ դաս)։



Գծապատկեր 62. Քասախ գետում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 63. Հրազդան գետում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 64. Հրազդան գետում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները

ՀՀ Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը







ՊԱՅՄԱՆԱԳԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարգկենտրոններ
- Քաղաքներ
- Հեռավայրեր

Մակերևութային ջրերի

- Որակի մոնիթորինգի դիտակետեր
- Հիդրոլոգիական դիտակետեր
- Մտորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս



Սևանի ջրավազանային կառավարման տարածք

Հիդրոլոգիական դիտարկումներ

Սևանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 17 դիտակետում, այդ թվում՝ 13 գետային, 4 լճային (Սևանա լիճ) և 1 ջրանցքում: Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 12-ում:

Աղյուսակ 12. Սևանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր, մ³/վ								
		ապրիլ			մայիս			հունիս		
		փաս-տացի	նորմա	%	փաս տացի	նորմա	%	փաս-տացի	նորմա	%
Ձկնագետ	Ծովագյուղ	5.66	4.21	134	4.58	4.25	108	1.39	1.53	91
Մասրիկ	Ծովակ	3.47	5.23	66	4.42	6.26	71	2.45	3.80	64
Մարտունի	Գեղհովիտ	1.26	1.80	70	3.98	4.81	83	5.61	5.46	103
Արգիճի	Վ.Գետաշեն	9.68	14.6	66	11.3	20.8	54	3.89	9.50	41
Գավառագետ	Նորատուս	4.79	4.98	96	4.24	6.55	65	3.96	4.44	89

Սևանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 18 դիտակետում:

Ձկնագետ գետի ջրի որակը Սեմյոնովկա գյուղից վերև հատվածում մայիսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում ջրի որակը ապրիլին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մայիսին և հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս):

Մասրիկ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Սոթք գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Կարճաղբյուր գետի ջրի որակը Ախպրաձոր գյուղից վերև հատվածում մայիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Գետաբերանի հատվածում ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Վարդենիս գետի ջրի որակը Վարդենիկ գյուղից վերև հատվածում մայիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Գետաբերանի հատվածում ջրի որակը ապրիլին և հունիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Մարտունի գետի ջրի որակը Գեղհովիտ գյուղից վերև հատվածում մայիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Գետաբերանի հատվածում ջրի որակը ապրիլին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիսին և հունիսին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Արգիճի գետի ջրի որակը Լեռնահովիտ գյուղից վերև հատվածում մայիսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում ջրի որակը ապրիլին և հունիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիսին՝ «լավ» (2-րդ դաս):

Ծակքար գետի ջրի որակը գետաբերանի հատվածում ապրիլին և մայիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «լավ» (2-րդ դաս):

Շողվագ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)։

Գավառագետ գետի ջրի որակը Ծաղկաշեն գյուղից վերև հատվածում մայիսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս)։ Գետաբերանի հատվածում ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)։

Արփա-Սևան ջրատարի ջրի որակը Ծովինար գյուղից հարավ-արևելք հատվածում ապրիլին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մայիս և հունիս ամիսներին՝ «միջակ» (3-րդ դաս)։



Գծապատկեր 73. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 74. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում նիտրատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 75. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները

Սևանա լիճ

2022 թվականի 2-րդ եռամսյակում հիդրոլոգիական դիտարկումներ են իրականացվել Սևանա լճի 4 դիտակետում՝ (Սևանա թերակղզի, Շորժա, Կարճաղբյուր, Մարտունի): Հիդրոօդերևութաբանական տվյալների հիման վրա կազմվել է Սևանա լճի հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսների ջրային հաշվեկշիռը:

Աղյուսակ 13. Սևանա լճի ջրային հաշվեկշիռը 2022 թվականի 2-րդ եռամսյակում

Ապրիլ

Ջրային հաշվեկշռի տարրերը	*Ընդամենը (մլն. մ³)*				*Բազմամյա բնութագրեր (մլն.մ³) 1961–2021թթ.*		
	Ըստ տասնօրյակների			*Ամսվա ընթացքում*			
	1	*2*	*3*		*Նվազ.*	*միջին*	*Առավ.*
ՄՈՒՏՔ							
Լիճը թափվող գետերով	*23.27*	*33.35*	*34.43*	*91.05*	*42.0*	*129.7*	*320.0*
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	*8.44*	*15.86*	*17.32*	*41.62*	*1.60*	*31.8*	*56.3*
Տեղումները լճի մակերևույթի վրա	*16.2*	*3.20*	*5.10*	*24.5*	*19.1*	*55.4*	*118.2*
Ստորերկրյա հոսք	*2.60*	*2.60*	*2.60*	*7.80*	*2.80*	*5.60*	*7.90*
Ընդամենը	*50.51*	*55.01*	*59.45*	*164.97*	*103.6*	*215.6*	*379.3*
ԵԼՔ							
Հրազդան գետով	*0.00*	*0.00*	*0.00*	*0.00*	*0.00*	*7.86*	*89.0*
Գոլորշացում լճի մակերևույթից	*4.30*	*8.80*	*7.40*	*20.5*	*3.40*	*39.8*	*106.0*
Ստորերկրյա հոսք	*0.40*	*0.40*	*0.40*	*1.20*	*0.40*	*1.10*	*1.40*
Ընդամենը	*4.70*	*9.20*	*7.80*	*21.7*	*3.80*	*49.9*	*121.5*
Կուտակում (նվազում)	*25.5*	*12.8*	*38.2*	*76.5*	*0.00*	*157.7*	*288.3*
Բացարձակ անկապք	*20.31*	*33.01*	*13.45*	*66.77*		*8.30*	
Հարաբերական անկապք %	*40.2*	*60.0*	*22.6*	*40.5*	*0.10*	*5.00*	*18.6*

Բնութագրեր	*Լճի մակարդակը, մ*	*Լճի մակերեսը, կմ²*	*Լճի ծավալը, կմ³*
Ամսվա առաջին օրը	*1900.45*	*1278.035*	*38.1130*
Ամսվա վերջին օրը	*1900.51*	*1278.606*	*38.1895*
Միջին ամսական	*1900.48*	*1278.320*	*38.1513*

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում *0.06 (մ)*
Մակարդակի փոփոխությունը 01.01.22 30.04.22 ընթացքում *0.08 (մ)*
30.04.22 և 30.04.21 մակարդակի տարբերությունը *-0.23 (մ)*

Մայիս

Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը (մլն. մ³)				Բազմամյա բնութագրեր (մլն.մ³) 1961–2021թթ.		
	Ըստ տասնօրյակների			Ամսվա ընթացքում			
	1	2	3		Նվազ.	միջին	Առավ.
ՄՈՒՏՔ							
Լիճը թափվող գետերով	40.91	34.57	38.74	114.22	74.3	182.7	341.0
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	16.65	17.11	18.83	52.59	1.70	44.4	63.8
Տեղումները լճի մակերևույթի վրա	44.2	30.7	23.3	98.2	33.4	71.5	131.7
Ստորերկրյա հոսք	2.60	2.60	2.70	7.90	3.30	5.70	7.90
Ընդամենը	104.36	84.98	83.57	272.91	165.3	288.5	463.4
ԵԼՔ							
Հրազդան գետով	0.00	0.00	0.00	0.00	0.00	12.2	94.6
Գոլորշացում լճի մակերևույթից	11.7	15.2	26.0	52.9	23.0	53.0	82.2
Ստորերկրյա հոսք	0.40	0.40	0.40	1.20	0.50	1.10	1.70
Ընդամենը	12.1	15.6	26.4	54.1	24.0	67.1	144.8
Կուտակում (նվազում)	63.9	64.2	115.5	243.6	25.8	221.3	454.6
Բացարձակ անկապք	28.36	5.18	-58.33	-24.79		1.30	
Հարաբերական անկապք %	27.2	6.10	41.1	8.33	0.10	4.60	22.9

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ²	Լճի ծավալը, կմ³
Ամսվա առաջին օրը	1900.51	1278.606	38.1895
Ամսվա վերջին օրը	1900.70	1280.406	38.4331
Միջին ամսական	1900.60	1279.459	38.3047

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում 0.19 (մ)
Մակարդակի փոփոխությունը 01.01.22 31.05.22 ընթացքում 0.27 (մ)
31.05.22 և 31.05.21 մակարդակի տարբերությունը - 0.20 (մ)

Հունիս

Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը (մլն. մ³)				Բազմամյա բնութագրեր (մլն.մ³) 1961–2021թթ.		
	Ըստ տասնօրյակների			Ամսվա ընթացքում			
	1	2	3		Նվազ.	միջին	Առավ.
ՄՈՒՏՔ							
Լիճը թափվող գետերով	31.00	23.72	17.67	72.39	36.6	109.39	225.0
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	15.98	7.37	4.41	27.76	0.00	34.7	55.7
Տեղումները լճի մակերևույթի վրա	7.30	17.0	30.0	54.3	4.80	71.9	136.0
Ստորերկրյա հոսք	2.60	2.60	2.60	7.80	3.00	5.70	7.80
Ընդամենը	56.88	50.69	54.68	162.25	76.28	209.5	355.7
ԵԼՔ							
Հրազդան գետով	6.80	15.21	12.85	34.86	0.18	46.2	120.9
Գոլորշացում լճի մակերևույթից	29.7	26.5	32.9	89.1	36.9	90.3	153.7
Ստորերկրյա հոսք	0.40	0.40	0.40	1.20	0.40	1.10	1.70
Ընդամենը	36.90	42.11	46.15	125.16	65.6	136.5	222.5
Կուտակում (նվազում)	38.5	25.6	-25.7	38.5	-128.4	77.8	240.7
Բացարձակ անկապք	-18.52	-17.02	34.23	-1.41		-4.50	
Հարաբերական անկապք %	24.6	25.1	42.6	0.86	0.40	4.70	30.0

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ²	Լճի ծավալը, կմ³
Ամսվա առաջին օրը	1900.71	1280.501	38.4459
Ամսվա վերջին օրը	1900.74	1280.785	38.4844
Միջին ամսական	1900.75	1280.879	38.4973

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում	0.03 (մ)
Մակարդակի փոփոխությունը 01.01.22 30.06.22 ընթացքում	0.31 (մ)
30.06.22 և 30.06.21 մակարդակի տարբերությունը	-0.06 (մ)

2022 թվականի ապրիլի 1-ին լճի մակարդակը կազմել է 1900.45մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատությամբ ցածր է եղել 18 սմ-ով: 2022 թվականի հունիսի 30-ին լճի մակարդակը կազմել է 1900.74մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատ ցածր է եղել 6սմ-ով: 2022 թվականի ապրիլի 1-ից մինչև հունիսի 30-ը լճի մակարդակը բարձրացել է 29 սմ-ով:

Արփա-Սևան ջրատարով լիճ մուտք գործած ջրի ծավալը ապրիլ ամսին կազմել է 41.621 մլն մ³, մայիսին՝ 52.592 մլն մ³, հունիսին՝ 27.760 մլն մ³:

2022 թվականի ապրիլի 1-ին Սևանա լճի մակերեսը կազմել է 1278.035 կմ², ծավալը 38.1130 կմ³, իսկ եռամսյակի վերջին օրը՝ հունիսի 30-ին համապատասխանաբար՝ 1280.501 կմ² և 38.4459կմ³:

Սևանա լճի ջրի որակի ուսումնասիրության նպատակով ջրի որակի նմուշառումն իրականացվել է Փոքր և Մեծ Սևանների տարբեր խորություններից: Սևանա լճի ջրի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի Հավելված 12.1-ի համաձայն: Երեք ամիսների ընթացքում Սևանա լճի ջրի որակի գնահատականները ներկայացված են (*Աղյուսակ 14*):

Սևանա լճում կենսածին նյութերի պարունակությունները.



Գծապատկեր 82. Մեծ Սևանում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 83. Փոքր Սևանում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 84. Մեծ Սևանում նիտրատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 85. Փոքր Սևանում նիտրատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 86. Մեծ Սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 87. Փոքր Սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները

Աղյուսակ 14. Սևանա լճի ջրի որակը 2022 թվականի 2-րդ եռամսյակում

Ապրիլ

Տեղադրություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Մեծ Սևան, 0.5մ խորություն	ԹՔՊ, նիտրիտ իոն, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Մեծ Սևան, 5մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
Մեծ Սևան, 10մ խորություն	ԹՔՊ, նիտրիտ իոն, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Մեծ Սևան, 20մ խորություն	ԹՔՊ, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Մեծ Սևան, 25մ խորություն	ԹՔՊ, նիտրիտ իոն, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Մեծ Սևան, 30մ խորություն	ԹՔՊ, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Փոքր Սևան, 0.5մ խորություն	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
Փոքր Սևան, 5մ խորություն	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
Փոքր Սևան, 10մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ՀԱԱ	3-րդ	3-րդ
Փոքր Սևան, 20մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ՀԱԱ	3-րդ	3-րդ

Տեղադրություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Փոքր Սևան, 30մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ՀԱԱ	3-րդ	3-րդ
Փոքր Սևան, 55մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
Փոքր Սևան, 70մ խորություն	ԹՔՊ, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Փոքր Սևան, 80մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ՀԱԱ	3-րդ	3-րդ

Մայիս

Տեղադրություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Մեծ Սևան, 0.5մ խորություն	ԹՔՊ, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Մեծ Սևան, 5մ խորություն	ԹՔՊ, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Մեծ Սևան, 10մ խորություն	Ամոնիում իոն, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	ԹՔՊ	4-րդ	
Մեծ Սևան, 20մ խորություն	Բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	ԹՔՊ, ամոնիում իոն	4-րդ	
Մեծ Սևան, 25մ խորություն	Բոր	3-րդ	4-րդ
	ԹՔՊ	4-րդ	
Մեծ Սևան, 30մ խորություն	Ֆոսֆատ իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	ԹՔՊ, ամոնիում իոն	4-րդ	
Փոքր Սևան, 0.5մ խորություն	ԹՔՊ, բոր, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
Փոքր Սևան, 5մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
Փոքր Սևան, 10մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
Փոքր Սևան, 20մ խորություն	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	ԹՔՊ	4-րդ	
Փոքր Սևան, 30մ խորություն	Բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	ԹՔՊ, ամոնիում իոն	4-րդ	
Փոքր Սևան, 55մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ

Տեղադրություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Փոքր Սևան, 70մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	3-րդ
Փոքր Սևան, 80մ խորություն	Բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	ԹՔՊ, ամոնիում իոն	4-րդ	

Հունիս

Տեղադրություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Մեծ Սևան, 0.5մ խորություն	ԹՔՊ, նիտրիտ իոն, երկաթ, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն	4-րդ	
Մեծ Սևան, 5մ խորություն	ԹՔՊ, երկաթ, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Մեծ Սևան, 10մ խորություն	ԹՔՊ, երկաթ, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Մեծ Սևան, 20մ խորություն	Ֆոսֆատ իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Մեծ Սևան, 25մ խորություն	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, մանգան, երկաթ, բոր, ՀԱԱ,	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Մեծ Սևան, 30մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, երկաթ, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն, մանգան, բոր	4-րդ	
Փոքր Սևան, 0.5մ խորություն	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	3-րդ
Փոքր Սևան, 5մ խորություն	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	3-րդ
Փոքր Սևան, 10մ խորություն	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	3-րդ
Փոքր Սևան, 20մ խորություն	ԹՔՊ, նիտրիտ իոն,, ֆոսֆատ իոն, բոր	3-րդ	3-րդ
Փոքր Սևան, 30մ խորություն	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, բոր, ՀԱԱ	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
Փոքր Սևան, 55մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մանգան, երկաթ, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Նիտրիտ իոն	5-րդ	

Տեղադրություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Փոքր Սևան, 70մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, երկաթ, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Բոր	4-րդ	
	Նիտրիտ իոն, մանգան	5-րդ	
Փոքր Սևան, 80մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Նիտրիտ իոն, մանգան	5-րդ	

ՀՀ Սևանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



Խորություն, մ	Ջրային դաս
0.5	4-րդ
5	4-րդ
10	4-րդ
20	4-րդ
25	4-րդ
30	4-րդ

Խորություն, մ	Ջրային դաս
0.5	4-րդ
5	4-րդ
10	3-րդ
20	3-րդ
30	3-րդ
55	3-րդ
70	4-րդ
80	3-րդ



Խորություն, մ	Ջրային դաս
0.5	4-րդ
5	4-րդ
10	4-րդ
20	4-րդ
25	4-րդ
30	4-րդ

Խորություն, մ	Ջրային դաս
0.5	4-րդ
5	3-րդ
10	3-րդ
20	4-րդ
30	4-րդ
55	3-րդ
70	3-րդ
80	4-րդ



Խորություն, մ	Ջրային դաս
0.5	4-րդ
5	4-րդ
10	4-րդ
20	4-րդ
25	4-րդ
30	4-րդ

Խորություն, մ	Ջրային դաս
0.5	3-րդ
5	3-րդ
10	3-րդ
20	3-րդ
30	4-րդ
55	5-րդ
70	5-րդ
80	5-րդ

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոն
- Քաղաքներ
- Բնակավայրեր
- Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտակետեր
- Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Սևանի ջրավազանային կառավարման տարածք

3-րդ	«միջակ»	
4-րդ	«ամբասխպատ»	
5-րդ	«վատ»	

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս

Արարատյան ջրավազանային կառավարման տարածք

Հիդրոլոգիական դիտարկումներ

Արարատյան ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 12 դիտակետում, այդ թվում՝ 11 գետային և 1 ջրամբարային (Ազատի ջրամբար): Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 15-ում:

Աղյուսակ 15. Արարատյան ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր, մ³/վ								
		ապրիլ			մայիս			հունիս		
		փաս-տացի	նորմա	%	փաս-տացի	նորմա	%	փաս-տացի	նորմա	%
Ազատ	Գառնի	5.80	7.70	75	9.12	12.3	74	5.35	9.29	58
Վեդի	Ուրցաձոր	4.42	4.50	98	4.65	6.84	68	0.32	2.16	15
Արփա	Ջերմուկ	4.00	6.26	64	6.29	18.7	34	3.90	11.4	34
Արփա	Արենի	24.0	30.5	79	29.0	50.6	57	9.55	25.7	37

Մակերևութային ջրերի որակ

Վեդի գետի ջրի որակը Ուրցաձոր գյուղից վերև հատվածում մայիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «լավ» (2-րդ դաս): Արարատ քաղաքից ներքև հատվածում ջրի որակը ապրիլին և մայիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Արփա գետի ջրի որակը Ջերմուկ քաղաքից վերև հատվածում ապրիլին և մայիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Վայք քաղաքից վերև հատվածում ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Վայք քաղաքից ներքև հատվածում ջրի որակը ապրիլին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Եղեգնաձոր քաղաքից վերև հատվածում ջրի որակը ապրիլին և հունիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Արենի գյուղից ներքև հատվածում ջրի որակը ապրիլին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիսին և հունիսին՝«անբավարար» (4-րդ դաս):

Դարբ գետի ջրի որակը ակունքում ապրիլին և հունիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), գետաբերանի հատվածում ջրի որակը ապրիլին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մայիսին՝ «վատ» (5-րդ դաս), հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս):

Հերհեր գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հունիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Եղեգիս գետի ջրի որակը Գետիկվանք գյուղից վերև հատվածում հունիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), գետաբերանի հատվածում ջրի որակը ապրիլին և հունիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Որոտան-Արփա ջրատարի ջրի որակը թունելի ելքից հատվածում ապրիլին և մայիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս):



Գծապատկեր 88. Արփա գետում մոլիբդենի կոնցենտրացիաների փոփոխությունները

ՀՀ Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը







ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոններ
- Քաղաքներ
- Բնակավայրեր

Մակերևութային ջրերի

- Որակի մոնիթորինգի դիտակետեր
- Հիդրոլոգիական դիտակետեր
- Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Արարատյան ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս



Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Հիդրոլոգիական դիտարկումներ

Հարավային ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 9 դիտակետում: Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են աղյուսակ 16-ում:

Աղյուսակ 16. Հարավային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր, մ³/վ								
		ապրիլ			մայիս			հունիս		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Մեղրիգետ	Մեղրի	3.75	5.70	66	4.89	7.70	63	7.85	8.47	3
Ողջի	Կապան	14.4	11.1	130	38.9	21.6	180	32.5	18.7	173
Որոտան	Գորայք	7.44	4.60	162	20.3	12.3	166	5.41	8.55	63

Մակերևութային ջրերի որակ

Կարճևան գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մեղրիգետ գետի ջրի որակը Մեղրի քաղաքից վերև հատվածում ապրիլին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մայիսին՝ «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Գետաբերանի հատվածում ջրի որակը ապրիլին և մայիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝ «վատ» (5-րդ դաս):

Աճանան (Նորաշենիկ) գետի ջրի որակը Աճանան գյուղից վերև հատվածում ապրիլին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝ «վատ» (5-րդ դաս): Գետաբերանի հատվածում ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Գեղի գետի ջրի որակը Աջաբաջ գյուղից վերև հատվածում մայիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «լավ» (2-րդ դաս): Գետաբերանի հատվածում ջրի որակը մայիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), հունիսին՝ «լավ» (2-րդ դաս):

Որոտան գետի ջրի որակը վերին հոսանքում հունիսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Գորայք գյուղից վերև հատվածում ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Սիսիան քաղաքից վերև հատվածում ջրի որակը ապրիլին և հունիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Սիսիան քաղաքից ներքև հատվածում ջրի որակը ապրիլին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մայիսին և հունիսին՝ «վատ» (5-րդ դաս):

Սիսիան գետի ջրի որակը Արևիս գյուղից վերև հատվածում ապրիլին և մայիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), հունիսին՝ «միջակ» (3-րդ դաս): Գետաբերանի հատվածում ջրի որակը ապրիլին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մայիսին՝ «վատ» (5-րդ դաս), հունիսին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Վարարակ գետի ջրի որակը Գորիս քաղաքից վերև և գետաբերանի հատվածներում ապրիլին և մայիսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):



Գծապատկեր 96. Կարճևան գետում պղնձի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 97. Վարարակ գետում նիտրիտ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները

ՀՀ Հարավային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը







ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոն
- Քաղաքներ
- Բնակավայրեր

Մակերևութային ջրերի

- Որակի մոնիթորինգի դիտակետեր
- Հիդրոլոգիական դիտակետեր
- Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս

Ջրամբարներ

Ախուրյանի, Արփի լիճ, Ազատի և Ապարանի ջրամբարներում իրականացվում են հիդրոլոգիական դիտարկումներ և ջրի որակի մոնիթորինգ, Մարմարիկի ջրամբարում իրականացվում են միայն հիդրոլոգիական դիտարկումներ, իսկ Կեչուտի ջրամբարում և Երևանյան լճում՝ միայն ջրի որակի մոնիթորինգ:

2022 թվականի 2-րդ եռամսյակում ջրամբարների լցվածությունների մեծությունները եռամսյակի ամիսների վերջին օրերի դրությամբ ներկայացված են 17-րդ աղյուսակում.

Աղյուսակ 17. Ջրամբարների ջրալցվածությունը 2022 թվականի 2-րդ եռամսյակում

Ջրամբարի անվանումը	Ջրամբարի ընդհանուր ծավալը. մլն.խոր.մ	Փաստացի լցվածությունը, ապրիլի 30-ի դրությամբ		Փաստացի լցվածությունը, մայիսի 31-ի դրությամբ		Փաստացի լցվածությունը, հունիսի 30-ի դրությամբ	
		ընդամենը մլն.խոր.մ	ընդհանուր ծավալի նկատմամբ %	ընդամենը մլն.խոր.մ	ընդհանուր ծավալի նկատմամբ %	ընդամենը մլն.խոր.մ	ընդհանուր ծավալի նկատմամբ %
Ախուրյան	525	332	63	417	79	371	71
Արփի լիճ	105	45.3	43	63.7	61	65.6	62
Ազատ	70	45.6	65	61.0	87	53.1	76
Ապարան	91	38.8	43	49.1	54	45.7	50
Մարմարիկ	24	13.6	57	20.1	84	14.4	60

Ջրամբարների ջրի որակ

Արփի լճի ջրամբարի ջրի որակը հունիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)։ Ախուրյանի ջրամբարի ջրի որակը հունիսին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)։ Ապարանի ջրամբարի ջրի որակը մայիսին և հունիսին գնահատվել է «լավ» (2-րդ դաս)։ Երևանյան լիճ ջրամբարի ջրի որակը ապրիլին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մայիսին՝ «վատ» (5-րդ դաս)։ Ազատի ջրամբարի ջրի որակը մայիսին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)։ Կեչուտի ջրամբարի ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «լավ» (2-րդ դաս)։



Գծապատկեր 101. Երևանյան լճում նիտրիտ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 102. Երևանյան լճում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները

Աղյուսակ 18. Ջրամբարների ջրի որակը 2022 թվականի 2-րդ եռամսյակում

Ապրիլ

Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
Երևանյան լիճ (112)	ամբարտակի մոտ	ԹՔՊ, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
		Ամոնիում իոն	4-րդ	
Կեչուտի ջրամբար (114)	ամբարտակի մոտ	-	2-րդ	2-րդ

Մայիս

Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
Ապարանի ջրամբար (111)	ամբարտակի մոտ	-	2-րդ	2-րդ
Երևանյան լիճ (112)	ամբարտակի մոտ	Լուծված թթվածին	3-րդ	5-րդ
		ԹՔՊ, նիտրիտ իոն, ՀԱՄ	4-րդ	
		Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	5-րդ	
Ազատի ջրամբար (113)	ամբարտակի մոտ	ԿՀՆ	4-րդ	4-րդ
Կեչուտի ջրամբար (114)	ամբարտակի մոտ	-	2-րդ	2-րդ

Հունիս

Ջրային օբյեկտ	*Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)*	*Ջրի որակի ցուցանիշ*	*Ջրի որակի ցուցանիշի դասը*	*Ջրի որակի ընդհանրական դասը*
Արփի լճի ջրամբար (109)	*ամբարտակի մոտ*	*ԿՀՆ*	*3-րդ*	*3-րդ*
Ախուրյանի ջրամբար (110)	*ամբարտակի մոտ*	*Նիտրիտ իոն*	*3-րդ*	*3-րդ*
Ապարանի ջրամբար (111)	*ամբարտակի մոտ*	*-*	*2-րդ*	*2-րդ*
Կեչուտի ջրամբար (114)	*ամբարտակի մոտ*	*-*	*2-րդ*	*2-րդ*

Արաքս գետ

2022 թվականի 2-րդ եռամսյակում դիտարկումներ են իրականացվել Արաքս գետի 8 դիտակետում: Գետի ջրի փորձանմուշներում որոշված ցուցանիշներից, ձկնատնտեսական ՍԹԿ-ներով գնահատման համաձայն, դիտվում է պղնձով բարձր աղտոտվածություն: Որոշված մյուս ցուցանիշներից գերազանցվել են ԹՔՊ-ի, ամոնիում, նիտրիտ և սուլֆատ իոնների, նատրիումի, մագնեզիումի, ցինկի, քրոմի, արսենի, նիկելի, մոլիբդենի, մանգանի, վանադիումի, երկաթի, ալյումինի և սելենի համապատասխան ՍԹԿ-ները: Արաքս գետի աղտոտվածության գերազանցումների վերաբերյալ մանրամասն տեղեկություն ըստ առանձին ամիսների բերված է աղյուսակ 19-ում:



Աղյուսակ 19. Արաքս գետի ջրի որակի մոնիթորինգի գնահատման արդյունքները 2022 թվականի 2-րդ եռամսյակում

Ապրիլ

Դիտակետի տեղադրություն (դիտակետի համար)	*Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)*															
	Թթվածնի քիմիական պահանջ, ՍԹԿ=30 մգ/լ	*Ամոնիում իոն, ՍԹԿ=0,39 մգN/լ*	*Նիտրիտ իոն, ՍԹԿ=0,024 մգN/լ*	*Սուլֆատ իոն, ՍԹԿ=100 մգ/լ*	*Լուծրիում ՍԹԿ=120 մգ/լ*	*Մագնեզիում, ՍԹԿ=40 մգ/լ*	*Ցինկ, ՍԹԿ=0,01 մգ/լ*	*Պղինձ, ՍԹԿ=0,001 մգ/լ*	*Քրոմ, ՍԹԿ=0,001 մգ/լ*	*Արսեն, ՍԹԿ=0,05 մգ/լ*	*Նիկել, ՍԹԿ=0,01 մգ/լ*	*Մանգան, ՍԹԿ=0,01 մգ/լ*	*Վանադիում, ՍԹԿ=0,001 մգ/լ*	*Երկաթ, ՍԹԿ=0,5 մգ/լ*	*Կոբալտ, ՍԹԿ=0,04 մգ/լ*	*Սեկտ, ՍԹԿ=0,001 մգ/լ*
Ագարակ քաղաքից 2 կմ հարավ ((29) AMS-1)	*1.2*	*1.5*	*2.1*	*1.9*	*_*	*1.3*	*_*	*6.2*	*7.7*	*_*	*_*	*8.0*	*22.9*	*2.1*	*7.2*	*6.0*
Ագարակ քաղաքից 2.5 կմ ք. հարավ-արևելք ((30) AMS-2)	*_*	*2.2*	*2.1*	*1.9*	*1.7*	*2.2*	*_*	*17.6*	*15.5*	*1.3*	*1.8*	*11.4*	*46.4*	*3.7*	*10.8*	*14.5*
Մեղրիգետի թափման կետից վերև (AMS-3)	*1.5*	*1.7*	*1.5*	*1.5*	*_*	*_*	*_*	*27.3*	*5.8*	*_*	*_*	*7.0*	*17.2*	*3.7*	*10.8*	*5.3*
Շվանիձորի գյուղից ներքև (AMS-6)	*1.2*	*1.3*	*1.9*	*1.8*	*1.5*	*2.1*	*2.4*	*143.4*	*22.3*	*1.8*	*2.5*	*34.2*	*74.5*	*16.7*	*48.2*	*23.0*

Մայիս

Դիտակետի տեղադրություն (դիտակետի համար)	Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)													
	Թթվածնի բիմխական պահանջ, ՍԹԿ=30 մգ/լ	Ամոնիում իոն, ՍԹԿ=0,39 մգN/լ	Նիտրիտ իոն, ՍԹԿ=0,024 մգN/լ	Սուլֆատ իոն, ՍԹԿ=100 մգ/լ	Մագնեզիում, ՍԹԿ=40 մգ/լ	Ցինկ, ՍԹԿ=0,01 մգ/լ	Պղինձ, ՍԹԿ=0,001 մգ/լ	Քրոմ, ՍԹԿ=0,001 մգ/լ	Կոկել, ՍԹԿ=0,01 մգ/լ	Մանգան, ՍԹԿ=0,01 մգ/լ	Նիկել, ՍԹԿ=0,001 մգ/լ	Երկաթ, ՍԹԿ=0,5 մգ/լ	Ալյումին, ՍԹԿ=0,04 մգ/լ	Սելեն, ՍԹԿ=0,001 մգ/լ
Հրազդան գետի թափման կետից վերև (26)	_	*1.9*	*3.6*	_	_	_	*27.5*	*9.6*	*4.8*	*27.9*	*14.9*	*4.2*	*56.9*	*1.3*
Հրազդան գետի թափման կետից ներքև (27)	_	_	*6.1*	_	_	_	*18.1*	*8.9*	*5.0*	*30.2*	*13.9*	*4.3*	*59.8*	*1.0*
0.5 կմ ք. Արարատից ներքև (28)	*1.3*	_	*3.8*	_	_	*1.5*	*23.9*	*10.2*	*6.1*	*38.6*	*16.7*	*5.2*	*73.6*	*1.4*
Ագարակ քաղաքից 2 կմ հարավ ((29) AMS-1)	*1.3*	*1.7*	*1.9*	*1.8*	*1.1*	_	*5.5*	*3.9*	_	*5.8*	*15.5*	*1.1*	*8.8*	*26.4*
Ագարակ քաղաքից 2.5 կմ ք. հարավ-արևելք ((30) AMS-2)	*1.2*	*1.8*	*1.9*	*2.0*	*1.1*	_	*44.1*	*6.0*	_	*6.8*	*16.3*	*2.5*	*18.7*	*27.0*
Մեղրիգետի թափման կետից վերև (AMS-3)	*1.3*	*1.9*	*1.6*	*2.0*	*1.1*	_	*10.6*	*3.9*	_	*5.4*	*14.9*	*1.2*	*9.7*	*26.4*
Շվանիձորի գյուղից ներքև (AMS-6)	*1.3*	*2.0*	*1.3*	*1.9*	*1.1*	_	*42.2*	*3.6*	_	*8.2*	*14.8*	*2.1*	*16.6*	*27.1*

Հունիս

Դիտակետի տեղադրություն (դիտակետի համար)	*Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)*											
	Թթվածնի քիմիական պահանջարկ, ՍԹԿ=30 մգ/լ	*Ամոնիում իոն, ՍԹԿ=0,39 մգN/լ*	*Նիտրիտ իոն, ՍԹԿ=0,024 մգN/լ*	*Սուլֆատ իոն, ՍԹԿ=100 մգ/լ*	*Պղինձ, ՍԹԿ=0,001 մգ/լ*	*Քրոմ, ՍԹԿ=0,001 մգ/լ*	*Նիկել, ՍԹԿ=0,01 մգ/լ*	*Մանգան, ՍԹԿ=0,01 մգ/լ*	*Լուծված թթվածին, ՍԹԿ=0,001 մգ/լ*	*Երկաթ, ՍԹԿ=0,5 մգ/լ*	*Կապարի, ՍԹԿ=0,04 մգ/լ*	*Սելեն, ՍԹԿ=0,001 մգ/լ*
Հուշակերտ գյուղից 0.9 կմ ներքև (25)	_	_	*1.4*	_	*6.7*	*4.8*	*1.6*	*15.0*	*11.5*	*2.5*	*36.4*	_
Ագարակ քաղաքից 2 կմ հարավ ((29) AMS-1)	*1.2*	_	*5.3*	*1.6*	*6.2*	*6.6*	_	*15.3*	*13.0*	*1.7*	*25.1*	*2.6*
Ագարակ քաղաքից 2.5 կմ ք. հարավ-արևելք ((30) AMS-2)	*1.3*	*2.5*	*7.9*	*1.7*	*6.7*	*6.5*	_	*12.8*	*13.5*	*1.5*	*20.4*	*3.2*
Մեղրիգետի թափման կետից վերև (AMS-3)	_	*2.1*	*6.0*	*1.8*	*7.7*	*6.0*	_	*11.2*	*13.0*	*1.3*	*18.0*	*2.9*
Շվանիձորի գյուղից ներքև (AMS-6)	*1.8*	_	*5.2*	*1.8*	*48.8*	*5.9*	_	*22.0*	*16.2*	*4.5*	*31.1*	*3.1*